ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2015թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 **ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ** 15-Ի **N** 10-Ա **ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամլո քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 10-Ա որոշման N1 հավելվածի 2-րդ բաժնի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. **Սոցիալական աջակցության տարածքային բաժիններ**

1) Սոցիալական աջակցության Աջափնյակի տարածքային բաժին
2) Սոցիալական աջակցության Ավանի տարածքային բաժին
3) Սոցիալական աջակցության Արաբկիրի տարածքային բաժին
4) Սոցիալական աջակցության Դավթաշենի տարածքային բաժին
5) Սոցիալական աջակցության Էրեբունու տարածքային բաժին
6) Սոցիալական աջակցության Կենտրոնի տարածքային բաժին
7) Սոցիալական աջակցության Մալաթիա-Սեբաստիայի տարածքային բաժին
8) Սոցիալական աջակցության Նոր Նորքի տարածքային բաժին
9) Սոցիալական աջակցության Նորք-Մարաշի տարածքային բաժին
10) Սոցիալական աջակցության Նուբարաշենի տարածքային բաժին
11) Սոցիալական աջակցության Շենգավիթի տարածքային բաժին
12) Սոցիալական աջակցության Քանաքեռ-Զեյթունի տարածքային բաժին»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 10-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի և գործադիր իշխանության տարածքային կառավարման մարմնի ստորաբաժանումներ են, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում են:

Միևնույն դրույթը սահմանված է նաև վերոնշյալ օրենքի կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության 04.06.2015թ. N582-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով, իսկ նույն կետի 2-րդ ենթակետով սահմանվել է, որ լիազորած պետական կառավարման մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող՝ Երևան քաղաքի վարչական տարածքում սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության տարածքային բաժիններ են (նախկին անվանումը՝ սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններ):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը 03.08.2015թ. հ.115-Ն հրամանով հաստատել է սոցիալական աջակցության տարածքային բաժնի օրինակելի կանոնադրությունը:

Ելնելով վերոգրյալից, անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N10-Ա որոշման N1 հավելվածով հաստատված Երևանի քաղաքապետարանի կառուցվածքում կատարել համապատասխան փոփոխություն, ուստի Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի հունիսի 15-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**